# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» նոյեմբերի 2015թ.

**Հաստատում եմ՝**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-44/15 բողոքը քննող

հանձնաժողովին

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.11.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքին ի լրումն 09.11.2015թ. դիրքորոշումը՝ պարզել ենք հետևյալը.

**1. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 02.11.2015թ. ներկայացված բողոքով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից «ՀՀ ԿԱ ՈՉ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ» ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2015 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 2

արձանագրությամբ հաստատված «Արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին» որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) արձանագրել է, որ «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն էլեկտրոնային www.armeps.am կայքում (այսուհետ նաև՝ Համակարգ) Ընթացակարգի բոլոր՝ ընդհանուր թվով 11 չափաբաժինների համար պահանջված փաստաթղթերը չի ներկայացրել՝ դրանով իսկ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն, 05.12.2013թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1370-Ն որոշումներով, Ընթացակարգի հրավերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Հիմք ընդունելով օրենքի նշված դրույթը՝ Հանձնաժողովը որպես Ընթացակարգի հայտերի գնահատման ամփոփ և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին տեղեկատվություն վերը նշվածն ամրագրել է Որոշման «Անհամապատասխանության համառոտ նկարագրություն բաժնում»՝ «էլեկտրոնային armeps.am կայքում մասնակիցը սահմանված կարգի պահանջներին համապատասխան չի ներկայացրել փաստաթղթերը» նշագրման միջոցով:

Ընկերությունը իրավիճակը պարզաբանելու նպատակով 14.10.2015թ. թիվ 087/015 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այուհետ նաև՝ Կենտրոն) պետին՝ հայտնելով, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով 08.10.2015թ. Ընկերությունը բոլոր օրենքով պահանջվող փաստաթղթերը՝ հրավերի պահանջներին համապատասխան ներբերոնել է Համակարգ և խնդրել է դեպքի վերաբերյալ ուսումնասիրություն և փորձաքննություն անցկացնել և տալ եզրակացություն: Ի լրումն՝ Ընկերությունը ներկայացրել է արդեն իսկ ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային կրիչը՝ դրանով իսկ աջակցելով գործընթացի լրիվ, բազմակողմանի և անաչառ քննության ապահովմանը:

Որևէ պարզաբանում չստանալով, նկատի ունենալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության 5-օրյա ժամկետում բողոք ներկայացնելու պահանջը, Ընկերությունը 16.10.2015թ. բողոք է ներկայացրել Կենտրոն՝ վիճարկելով

Որոշումը:

Կենտրոնի պետի 19.10.2015թ. թիվ 01/04.1/2791-15 գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է, որ իր 16.10.2015թ. ներկայացված բողոքը. «չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջներին, մասնավորապես բողոքում նշված չեն բողոքի իրավական հիմքերը»: Նույն գրությամբ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, Կենտրոնի պետն առաջարկել է օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում վերացնել նշված թերությունը:

Ընկերությունը 20.10.5015թ. Կենտրոն է ներկայացրել 16.10.2015թ. ներկայացված բողոքում արձանագրված թերությունները շտկված բողոք:

Կենտրոնի պետի 21.10.2015թ. թիվ 01/04.1/2836-15 գրությամբ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված բողոքը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ բողոքը չի ներկայացվել 5-օրյա անգործության ժամանակահատվածում: Միաժամանակ, գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված գնումների ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին 13.10.2015թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է հայտարարություն, համաձայն որի բողոքը կարող է ներկայացվել հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ժամանակահատվածում, այսինքն մինչև 19.10.2015թ.:

Կենտրոնի պետի 21.10.2015թ. թիվ 01/03.3/2826-15 գրությամբ, ի պատասխան Ընկերության 14.10.2015թ. թիվ 087/015 գրության, տեղեկացվել է, որ ընկերության կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է Համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ Ընթացակարգին Ընկերության կողմից ներկայացված հայտը կոդավորվել է ճիշտ, սակայն անհայտ (ծրագրային սխալ) պատճառներով փաթեթը իր մեջ չի ներառում կցված ֆայլերը, որի հետևանքով առաջացել է սխալ:

Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ Ոստիկանության զորքերը, 26.10.2015թ. 5-րդ չափաբաժնով «Ռասսի» ՍՊԸ-ի հետ կնքել է ՀՀ ԿԱ ՈԶ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ/44 համարի պայմանագիրը՝ պայմանագրի վերջնաժամկետ սահմանելով 25.12.2015թ.:

Ընկերությանը միևնույն ժամանակ տեղեկացրել է, որ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների

գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն, 05.12.2013թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1370-Ն որոշումներով ամրագրված պահանջներին համապատասխան՝ էլեկտրոնային եղանակով ներկայացրել է Ընթացակարգում ներառված բոլոր՝ ընդհանուր թվով 11 չափաբաժինների համար անհրաժեշտ փաստաթղթերը (հավելվածները):

Ընթացակարգում ներառված բոլոր՝ ընդհանուր թվով 11 չափաբաժինների համար անհրաժեշտ և օրենքով և այլ իրավական ակտերով պահանջվող վերը նշված բոլոր փաստաթղթերը Ընկերության կողմից ներկայացված լինելը հավաստվում է Համակարգի կողմից Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ներկայացված ծանուցմամբ:

Այսինքն հավաստվել է, որ Ընկերությունը հայտը կոդավորել է ճիշտ, ներբեռնել է Համակարգ, սակայն Համակարգի անհայտ (ծրագրային սխալ) սխալի պատճառով՝ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կամքից անկախ և մեղավորության շրջանակներից դուրս, առաջացել է սխալ:

Հանձնաժողովը Որոշմամբ արձանագրել է, որ Ընկերությունը Համակարգում Ընթացակարգի մեջ ընդգրկված բոլոր՝ ընդհանուր թվով 11 չափաբաժինների համար պահանջված փաստաթղթերը չի ներկայացրել: Ընթացակարգի հայտերի գնահատման ամփոփ և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին տեղեկատվություն վերը նշվածն ամրագրել է Որոշման «Անհամապատասխանության համառոտ նկարագրություն բաժնում»՝ «էլեկտրոնային armeps.am կայքում մասնակիցը սահմանված կարգի պահանջներին համապատասխան չի ներկայացրել փաստաթղթերը» նշագրման միջոցով:

Հանձնաժողովը Որոշմամբ արձանագրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, որը հիմնավորվում է ինչպես Ընկերությանը Համակարգի կողմից տրված էլեկտրոնային ծանուցագրով, այնպես էլ Կենտրոնի պետի 21.10.2015թ. թիվ 01/03.3/2826-15 գրությամբ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը՝ համաձայն որի. «յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները»: Նշված հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և ընթացակարգի հրավերի 7.2.1.-րդ կետի համաձայն. «Հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»: Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն Հանձնաժողովը պարտավոր է բացել և գնահատել հայտերը:

Հանձնաժողովը խախտել է վերը նշված դրույթները՝ «Քանաքեռ կարի ֆաբրիկայի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը հրավերով սահմանված կարգով գնահատելու փոխարեն անգործություն է դրսևորել՝ Որոշմամբ արձանագրելով, որ դրանք չեն ներկայացվել: Մինչդեռ ինչպես նշվեց դրանց ներկայացնելը հավաստվել է Համակարգի՝ Մասնակցին ուղարկված համապատասխան ծանուցմամբ, ինպես նաև Կենտրոնի պետի 21.10.2015թ. թիվ 01/03.3/2826-15 գրությամբ, համաձայն որի Ընկերությունը հայտը կոդավորել է ճիշտ, ներբեռնել է Համակարգ, սակայն Համակարգի անհայտ (ծրագրային սխալ) սխալի պատճառով՝ Ընկերության կամքից անկախ և մեղավորության շրջանակներից դուրս, առաջացել է սխալ:

Ընթացակարգի հրավերի 8.1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը գնահատում է Ընթացակարգի հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին: 8.1.2-րդ կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.2.-րդ կետի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները:Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Հանձնաժողովը խախտել է վերը նշված դրույթները՝ չի ստուգել մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցին որոշելուց հետո գնահատող հանձնաժողովը ընթացակարգի մասնակիցներին համակարգի միջոցով ուղարկում է՝ հայտարարություն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին, որը հրապարակում է նաև gnumner.am և armeps.am կայքերում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 29 րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Հանձնաժողովը չի ապահովել գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության պահանջի, ինչպես նաև Օրենքի և այլ իրավական ակտերի վերը նշված պահանջների կատարումը, քանի որ Մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելը կամ չներկայացնելը հիմնավորող ապացույցը նշված դեպքով հանդիսանում է Համակարգի կողմից տրված ծանուցումը, ինչպես նաև 21.10.2015թ. Կենտրոնի պետի 01/03.3/2826-15 գրությունը:

Հետևաբար՝ հիմնավորված է համարվում այն փաստը, որ Ընթացակարգի համար պահանջվող փաստաթղթերը Ընկերության կողմից ամբողջությամբ բեռնվել են Համակարգ, այսինքն ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել են: Թերևս առավել տրամաբանական կլիներ, եթե Հանձնաժողովը արձանագրեր, ոչ թե Ընկերության կողմից փաստաթղթեր չներկայացնելու հանգամանքը, այլ արձանագրեր և վիճարկեր ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին չհամա-պատասխանելու փաստը:

Այսինքն, ըստ ընկերության, Հանձնաժողովն սխալ է արձանագրել իրավիճակը: Այլ կերպ ասած Հանձնաժողովի համար տեսանելի և ակնհայտ է եղել, որ Ընկերությունը ներբերռնել է հայտերը: Համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպությունից համապատասխան պարզաբանում ստանալու փոխարեն (ներբեռնված հայտերի ֆայլերը չբացելու կամ դատարկ բացելու հարցի պարզաբանում), Հանձնաժողովը արձանագրել է, որ, քանի որ ներբեռնված ֆայլերը չեն բացվում կամ բացվում են դատարկ, հետևաբար Ընկերությունը չի ներկայացրել հայտերը, որը կարծում ենք անտրամաբանական է և ապօրինի՝ հաշվի առնելով վերը նշված ապացույցներով

հիմնավորված այն հանգամանքը, որ Ընկերությունը ամբողջությամբ ներբերոնել է հայտերը, սակայն ծրագրի սխալի պատճառով այն չի գործարկվել:

Մինչդեռ Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ Ոստիկանության զորքերը, 26.10.2015թ. 5-րդ չափաբաժնով «Ռասսի» ՍՊԸ-ի հետ կնքել է ՀՀ ԿԱ ՈԶ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ/44 համարի պայմանագիրը՝ պայմանագրի վերջնաժամկետ սահմանելով 25.12.2015թ.:

Նշված իրավիճակի սխալ արձանագրումից հետո շղթայական հերթականությամբ Ընթացակարգն ամբողջությամբ իրականացվել է ապօրինի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 31-րդ, 45-րդ հոդվածների, ինչպես նաև վերը նշված այլ իրավական ակտերի պահանջների խախտումներով:

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 02.11.2015թ., բողոքին ի լրումն 09.11.2015թ. դիրքորոշմամբ հայտնել է, որ սահմանափակվել է մասնակցի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնումներին մասնակցելու իրավունքը և գնումներին մասնակցելու հավասարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով սահմանափակվել է Ընկերության Ընթացակարգին մասնակցելու իրավունքը՝ իր բոլոր իրավական և ոչ իրավական հետևանքներով:

Բացի այդ, սահմանափակվել է նաև Ընթացակարգի մասնակիցների միջև մրցակցությունը, քանի որ «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի՝ սահմանված պահանջների պահպանմամբ՝ իրավաչափ գործողությունների արդյունքում ներկայացրած հայտը չի դիտարկվել կամ չի գնահատվել:

Արդյունքում՝ ի լրումն բողոքում ներկայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 31-րդ, 45-րդ հոդվածների պահանջների խախտումների, խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերը նշված լրացուցիչ իրավական հիմքերից, ինպես նաև հիմք ընդունելով

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը՝ խնդրել է՝ «ՀՀ ԿԱ ՈՉ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ» ծածկագրով հայտարարված բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

**2. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.11.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.11.2015թ. թիվ 4/869 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն էլեկտրոնային եղանակով բացել և գնահատել է հայտերը, սակայն Ընկերության կողմից Համակարգում ներկայացված չեն եղել հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը, իսկ Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները:

Պատվիրատուն 06.11.2015թ. թիվ 4/869 գրությանը կից ներկայացրել է նաև Հանձնաժողովի արձանագրությունները, այդ թվում նաև Հանձնաժողովի 09.10.2015թ. ժամը 14:30-ի նիստի արձանագրությունը, որի 1.3 կետի համաձայն՝ որպես գնային առաջարկ ներկայացրած մասնակից է նշվել նաև «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

**3. ԳԲԽ-41/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-41/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ ոստիկանական զորքերի կողմից հայտարարված ՀՀ ԿԱ ոստիկանական զորքերի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԿԱ ՈՉ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ» ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով հայտարարված բանակցային ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ինչն ամրագրվել է նաև Հանձնաժողովի 09.10.2015թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) 1.3 կետով:

2. Արձանագրության 1.4 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը չի ներկայացվել ծրարները կազմելու, ներկայացնելու և սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

3. Արձանագրության 1.4.1 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել ծրարները կազմված լինելու վերաբերյալ հրավերով սահմանված պահանջներին:

4. Արձանագրության 1.5 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել գնային առաջարկներում պահանջվող փաստաթղթերի առկայության պահանջին:

5. Արձանագրության 1.5.1 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել Ընթացակարգի էլեկտրոնային ձևով հրավերով սահման-ված կարգով մասնակիցների գնային առաջարկ և գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ներկայացնելու պահանջներին:

6. Արձանագրության 1.6 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

7. Ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարա-րությունում ամրագրվել է, որ բոլոր թվով 11 չափաբաժիններով էլեկտրոնային armeps.am կայքում Ընկերությունը սահմանված կարգի պահանջներին համապատասխան չի ներակայացրել փաստաթղթերը:

8. Կենտրոնը 18.11.2015թ. թիվ 01/04.1/3314-15 գրությամբ հարցում է կատարել Armeps համակարգը սպասարկող «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին, թե արդյոք armeps.am համակարգով Ընկերության կողմից ներկայացված մասնակցության հայտում կցված ֆայլերի բացակայությունը պայմանավորված է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի գործողություններով, թե Armeps համակարգի ծրագրային խափանման արդյունք է:

9. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն Կենտրոնին 20.11.2015թ. գրությամբ հայտնել է, որ հնարավոր չէ պարզել, թե մասնակցի որ գործողություններն են պատճառ հանդիսացել տվյալ խնդրի առաջացման համար, քանի որ Ընկերության հայտի կազմման գործընթացը կատարվել է իրենց համակարգչի վրա, ինչը սպասարկող ընկերության տնօրինության տակ չէ և համակարգը չի ստուգում հայտի պարունակությունը մինչև բացման գործընթացի սկիզբը:

**4. ԳԲԽ-41/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.11.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ի լրումն բողոքին 09.11.2015թ. ներկայացված դիրքորոշումը, ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի 06.11.2015թ. թիվ 4/869 գրությունը և կից փաստաթղթերը, «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի 20.11.2015թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

ա. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի 7.2.1.-րդ կետի համաձայն. «Հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Նույն Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը:

Ընթացակարգի հրավերի 8.1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը գնահատում է Ընթացակարգի հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

Հրավերի 8.2.-րդ կետի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Ընկերությունը ներկայացրած բողոքում հանգել է եզրակացության, որ Հանձնաժողովը խախտել է վերը նշված դրույթները. «Քանաքեռ կարի ֆաբրիկայի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը հրավերով սահմանված կարգով գնահատելու փոխարեն՝ անգործություն է դրսևորել՝ Որոշմամբ արձանագրելով, որ դրանք չեն ներկայացվել:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Արձանագրության 1.3 կետով ամրագրվել է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքը (***Ընթացակարգին մասնակցության հանգամանքը***), այսինքն Պատվիրատուն արձանագրել է Ընկերության կողմից հայտը ներկայացված

լինելու փաստը և գնահատել է դրա համապատասխանությունը հրավերով ներկայված պահանջներին:

Հայտի գնահատման արդյունքում Պատվիրատուն Արձանագրության 1.5.1 կետով կայացվրել է որոշում, որի համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել Ընթացակարգի էլեկտրոնային ձևով հրավերով սահմանված կարգով մասնակիցների գնային առաջարկ և գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ներկայացնելու պահանջներին:

Արձանագրության 1.4, 1.4.1, 1.5, 1.5.1 կետերով կայացված որոշումների համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով հայտերի ներկայացման համար սահմանված պահանջներին, ինչի հետևանքով Ընկերության հայտը Արձանագրության 1.6 կետով կայացված որոշմամբ մերժվել է:

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված գնումների ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին 13.10.2015թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած հայտարարությամբ նույնպես ամրագրվել է, որ Ընկերությունը ***սահմանված կարգի պահանջներին համապատասխան*** չի ներկայացրել փաստաթղթերը, այլ ոչ թե չի ներկայացրել փաստաթղթերը, ինչպես դա նշում է Ընկերությունը իր բողոքում:

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուն այս մասով չի խախտել Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, Հրավերի 8.1.1-րդ և 8.2.-րդ կետերի պահանջները, քանի որ գնահատել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրել, որ Ընկերությունը սահմանված կարգի պահանջներին համապատասխան չի ներկայացրել փաստաթղթերը:

բ. ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի***, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ ***գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 8.1.2-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի «զ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Արձանագրության 1.5.1 կետով կայացված որոշման համաձայն՝ Ընկերության հայտը չի համապատասխանել Ընթացակարգի էլեկտրոնային ձևով հրավերով սահմանված կարգով մասնակիցների **գնային առաջարկ** և գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ներկայացնելու պահանջներին, իսկ Կարգի 45-րդ կետով անհամապատասխանությունների շտկման հնարավորությունը չի կիրառվում հրավերով նախատեսված պահանջներին ***գնային առաջարկի անհամապատասխանության կամ դրա բացակայության պարագայում***, ուստի գտնում ենք, որ այս մասով Պատվիրատուն նույնպես գործել է իրավաչափ:

գ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած Հայտում առկա խնդիրը Ընկերության կողմից մեկնաբանվել է որպես Ընկերության մեղավորության շրջանակներից դուրս և կամքից անկախ այլ օբյեկտիվ գործոնների արդյունք, սակայն, գտնում ենք, որ նման պնդումն անհիմն է:

Մասնավորապես, Կենտրոնը 18.11.2015թ. թիվ 01/04.1/3314-15 գրությամբ հարցում է կատարել Armeps համակարգը սպասարկող «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին, թե արդյոք armeps.am համակարգով Ընկերության կողմից ներկայացված մասնակցության հայտում կցված ֆայլերի բացակայությունը պայմանավորված է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի գործողություններով, թե Armeps համակարգի ծրագրային խափանման արդյունք է:

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն 20.11.2015թ. գրությամբ հայտնել է, որ հնարավոր չէ պարզել, թե մասնակցի կոնկրետ **որ գործողություններն են պատճառ հանդիսացել տվյալ խնդրի առաջացման համար**, քանի որ Ընկերության հայտի կազմման գործընթացը կատարվել է իրենց համակարգչի վրա, ինչը սպասարկող ընկերության տնօրինության տակ չէ և համակարգը չի ստուգում հայտի պարունակությունը մինչև բացման գործընթացի սկիզբը:

Այսպիսով, նման փաստական հանգամանքներում ակնհայտ է, որ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտում առկա խնդիրը պայմանավորված է եղել մասնակցի գործողություններով, ուստի, Ընկերության Ընթացակարգի մասնակցության իրավունքը որևէ կերպ սահմանափակված չի եղել, քանի որ վերջինիս կողմից, ըստ էության, ներկայացվել է մասնակցության հայտ, որի հրավերով ներկայացված պահանջներին համապատասխանությունը գնահատվել է Հանձնաժողովի կողմից, և գնահատման արդյունքում արձանագրվել է, որ այն չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված չի եղել այդպիսին ներկայացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.11.2015թ. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՋ ԲԸՀԱՊՁԲ-2015/ԻԾ» ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով հայտարարված բանակցային ընթացակարգը ապօրինի հայտարարելու մասին բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-41/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան